



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3173

3174

3175

3176

616.9

S-16



S-17 Printed in Turkey

100 90

# ԹՈՒՐԻՒՅ

ԵՐԵՔ ՄԵԾ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԳՐԵՑ

ՏՈՒՐ. Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆ

ՕՍՄ. ԵՒ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒԱՆ ՍԵՐԱՍԻՈՑ

Արտատպուած «Բիւզանդիոն»ի թիւերէն



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ԲԻԻԶԱՆԴԻՈՆ»Ի

1911

616.9

S-15 47

# ԹՈՒՐԿԻՈՅ

ԵՐԵՔ ՄԵԾ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳՐԵՅ

ՏՈՒՐ. Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆ

ՕՍՄ. ԵՒ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒԱՆ ՍԵՔԱՍՏԻՈՅ

Արտատպուած «Բիւզանդիոն»ի թիւքէն

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ԲԻԻԶԱՆԴԻՈՆ»Ի

1911

A. DEVEJIAN LIBRARY  
NEW YORK

Ա. ՏԵՎԵՅԻԱՆ ԳՐԱՏՈՒՆ

16538

# Թ Ո Ւ Ր Ք Ի Ո Յ

## ԵՐԵՔ ՍԵԾ ՇԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Թուրքիան ունի այլազան ու բազմազան ցաւեր, զորս եւրոպիոյ մէջ ժամանակ մը ապրող Օսմանցիներն աւելի լաւ կրնան զգալ, քան երկրէն դուրս չեկող ընթիկները:

Մեր տեսանելի մեծագոյն ցաւերը կը կազմեն զիւզօրէից մէջ ցեղապետներու ու աղաներու, իսկ քաղաքաց մէջ էջբֆ անուանեալ բոնաւորաց խեղճ ժողովրդեան վրայ ի գործ դրած զրկանքները, և մեր պաշտօնէից մի կարեւոր մասին անիրաւու թիւններն ու շահատակութիւնները. այս ամէնն իբր ներքին ուտիճներ շատ աւելի կ'իլլասեն օսմ. հայրենեաց՝ քան մեր արտաքին թշնամիները, որք բնական են մեզ նման սաան օտար կառավարութեանց սահմանակից ընդարձակատարած և ի բնէ հարուստ երկրի մը համար: Մեր ներքին ու արտաքին այս դժուարութիւններու ու ցաւերու առթած իլլասներն ու կորուստները փոքր բաներ մ'են բազդատմաւոր

1000 -  
39

Թուրքիոյ մէջ բոյն դրած ու ճարտակած երեք մեծ հիւանդութեանց՝ որք ամէն տարի հարիւր հազարաւոր ժողովուրդ կը կոտորեն, և պիտի յաջողին բնաջինջ ընել այս ի բնէ գրախտանման երկիրն՝ եթէ այս մեծ վտանգներուն առաջին անել չխորհինք «մեծ ցաւոց մեծ դարման» ի սկզբամբ:

Երէկուան Պուլկարիան հասարակաց առողջութեան համար տարեկան  $4\frac{1}{2}$  միլիոն ֆր. կ'ծախսէ, այսինքն իր ընդհանուր պիւտժէին  $\frac{1}{30}$ ը, իսկ մենք... ոչ իսկ  $\frac{1}{100}$ ը:

Պուլկարիոյ ժողովուրդը 1889ին 3 միլիոն 300.000 էր, 1910ին վիճակագրութիւնը 4,400,000 գտաւ. 20 տարուան մէջ 1,100,000ի աճում տեղի ունեցեր է, առանց նկատի առնելու 200,000 խալամներու ի Թուրքիա գաղթումը. իսկ մեր երկրին մէջ անուանաբար 30 միլիոն ենք ու կ'մնանք, գուցէ և կ'նուազինք:

Մեր ակնարկած երեք մեծ հիւանդութիւններն են Պարբերական ջերմը, Ֆրանկախաղը, և Թուքային ուռականութիւնը:

Քննենք այս երեք ահռելի հիւանդութիւններն և անոնց յառաջ բերած կոտորածները:

Ա. ԸՆԴՀԱՏԱԿԱՆ ԶԵՐՄ

Ընդհատական ջերմն (բուբոն, ջերմ) հետեւանք է մեր արեան մէջ ապրող գործարանաւոր մարմիններու, զորս ումանք տարրական բոյսեր, իսկ այլք (կալուան և ընկերք)՝ Նախակենդանիներ կ'համարին: Այս գործարանաւոր էակներու բնական միջավայրը լաւ ծանօթ չէ. գիտենք միայն թէ ճահիճներն և ճահճանման խոնաւ մակերեւոյթները (\*) ապրող մթեղներու մասնաւոր տեսակները (անօքէլ) (\*\*) մարդոց արիւնը ծծելու համար զա-

(\*).—Ճահճանման վայրեր կ'անուանեմ այն գետեղրերն ու լճեղրերն որք անձրեւոց առատութեան եղանակին ջուրով կը ծածկուին, ինչպէս նաև գետերու բերանները, անթափանց հողերու խոնաւ մակերեւոյթները, բրինձի մշակութեան յատկացեալ հողերը, բանջարանոցի պարտէզները, և ո՛ր է խոնաւ հողերն ու գէշ սալայատակեալ քաղաքներու և զիւղօրէից խորտուբորտ վողոցներն որք խոնաւ մակերեւոյթներ կ'ներկայացնեն:

(\*\*).—Անօքէլները նման այլ մթեղացիներնց ձուերը ճահճուտ ու խոնաւ մակերեւոյթներու վրայ կ'ածեն, որք անդ բացուելով թրթուրի մը ծնունդ կուտան. սա իսկ մը կերպարանափոխութիւններէ ետք կատարեալ միջատի ձեւը կ'առնէ:

նոնք մխեղնուն՝ եթէ այդ անձը պարբերական տենդի ենթակայ է և հետեաբար ունի իր արեան մէջ Լալուանի արենակենդանիները՝ արեան հետ կ'ընդունի և այդ հիւանդառիթ կենդանիներն , և ապա առողջ անձ մը մխեղուն՝ այդ հիւանդութեան պատճառէակներն անոր արեան մէջ կ'ներարկէ , ու այդ անձը պարբերական տենդի կ'ենթարկի :

Այս հիւանդութեան հունտերը մարդոց արեան մէջ կ'զարգանան : Նախ փոքր ու գնդաձև են , կ'աճին և արեան կարմիր գնդակներու տրամագծին կ'հաւասարին . ապա բազուկներ կ'արձակեն , որոնց շնորհիւ մեծ շարժումներ կ'ընեն արեան մէջ , ոմանք մահիկի ձեւ կ'առնեն , ու վերջապէս ներքին բաժանմամբ շատ մը գրնդակներու ծնունդ կուտան , որք ասոնց հունտերը կրնան համարուիլ . ասոնք կ'աճին ու կ'զարգանան , կրելով միևնոյն ձեւակերպութիւնները : Այս մանրջօրէնները Լալուան հանձայնի արենակենդան կ'անուանէ , և որք աւելի Լալուանի արենակենդաններ կը կոչուին :

Այս գործարանաւոր էակաց մեր արեան մէջ բեղմնաւորութեան առթիւ է որ ջերմի նոպաները տեղի կ'ունենան , որ ինչպէս դժբախտաբար ծանօթ է մեր հասարակութեան՝ կ'ըզականայ երեք պահերէ , դող , չոր տաքութիւն մը և ապա

քրտինք : Կ'երեւայ թէ որք կ'համապատասխանէ այս մանրջօրէններու զարգացման հետեւանօք արեան կարմիր գնդակներու կոտորածին , և մարմնոց թունաւորման . ապա արեան սպիտակ գնդակները պատերազմ կ'մղեն այդ օտար տարրերու դէմ , որոյ հետեւանօք յառաջ գայ ջերմութիւն , և ջերմութեամբ փճացումն այդ օտար մարմնոց , և վերջապէս բարձր շնորհիւ վարակեալի մարմնէն դուրս կ'ելլեն այդ օտար մարմնոց թոյները : Սակայն հունտերը կ'մնան , որք զարգացմամբ միևնոյն երեոյթներն յառաջ կ'ըրերն :

Նոպաները կ'ըլլան օրեայ , երկօրեայ , եռօրեայ , քառօրեայ , այսինքն ամէն օր , օր ընդ մէջ , երեք օրն մի անգամ , ևն . : Ըստ ոմանց տարբեր տեսակի կ'վերաբերին զայնս սյուսձառող արենակենդանները (\*): Երբեմն մի քանի տեսակները միանգամայն կ'զանուին միևնոյն հիւանդին մէջ , և իւրաքանչիւրն իր հաշւոյն կ'գործէ :

Այս կանոնաւոր անուանեալ երեք նոպաներով ջերմերէ զատ՝ կան և թերի նոպայով տեսակներ , յորում նոպայի երեք փուլերէ մին կամ երկուքը կ'պակսին և

(\*) .— Ամէնէն աւելի ընդհանրացածն օր ընդ մէջ տեղի ունեցողն է :

կ'անուանուին Գալլիանի ջերմեր: Գալլիանի կ'կոչուի ջերմը, երբ այս որոշ փուլերը չներկայանար և միայն ջղացաւութիւն, կտորտուկ, յօղուածացաւ, եւն. յառաջ կը բերէ:

Ամառնային եղանակին ջերմութեան աճամբ ճահճաց և ճահճանման վայրերու վնասակարութիւնը կ'աւելնայ, զի անդ ապրող մթեղները կ'բազմանան: Անձրևոտ եղանակին խոնաւ տարածութիւններն աւելնալուն հետեւանօք՝ անկէ վերջ հիւանդութիւնը կ'սաստկանայ: Ճահճներէ և ճահճանման վայրերէ փչող հողմերն այս հիւանդութեան փոխանցիչ միջատները հետուները կ'փոխադրեն: Այս հիւանդառիթ հոցներէ բլւերներով, անտառներով ու այլ աղբի պատնէշներով անջատուած վայրերը զերծ կ'մնան հիւանդութենէ: Բարձրութեանց վրայ գտնուած վայրերը չեն վարակուիր, զի մթեղները բարձրերը չեն ելլեր: Մթեղներն աւելի արեւի մարը մտած ատեն և գիշերները կ'գործեն, ուստի և այս վարակեալ վայրերն աւելի այդ առեւնները վնասակար են:

— Զերմերն ենթակային արեան գնտիկները կ'նուազեցնեն, ուստի և անոնց սակաւարիւնութիւն (Anémie) կ'պատճառեն, փայծաղին կ'խոչորցնեն և առողջութեան խորապէս կ'վնասեն:

Ճահճներու աղղեցութեան ենթարկեալ ժողովուրդը՝ ճահճային Կաշիէ (Cachexie paludéenne) կ'տկարանայ, գունաթափ ու ուժասպառ կ'ըլլայ և դժուարաչնչութեան, սրտի բարախտան ու ջրգողութեան կ'ենթարկուի: Կ'ունենան ևս շատ անգամ խոյլախտ (scrofule), լեարդի ու երիկամանց հիւանդութիւններ, թոքային ուռականութիւն (tuberculose pulmonaire), Ողնաթեքութիւն (rachitisme): Մանուկները խոչոր փորով, ծերի դէմքով սքախներ կ'ըլլան, կիներն որդեծնողեան հետեւանօք կ'մեռնին. վերջապէս կաջ վրասնայ (pernicieux) անուանեալ տեսակ մը՝ որ մեծապէս կ'վտանգէ առողջութեան, և նոյն իսկ անմիջական մահեր յառաջ կ'բերէ:

Ճահճները շատ անգամ իրենց շուրջը գտնուող ժողովուրդը փճացնելով քաղաքները գիւղերու, և նոյն իսկ անբնակ երկրաց կ'վերածեն: Աւասիկ առ այս մի քանի պատմական օրինակներ:

Իտալիոյ Պուէնա քաղաքն որ 60,000 բնակիչ ունէր 13րդ դարուն՝ այժմ 7000 ժողովուրդ ունի: Աքուլէ քաղաքն որ 130,000 բնակիչ ունէր՝ այժմ անդ միայն 1600 մնացած է, իսկ Սահոռա քաղաքը բոլորովին փճացած է:

Ֆրանսայի Պրէս գաւառի Վիլլյառ քա-

զաքն որ 18րդ դարուն 8—900 տուն ունէր այժմ 30 տունէ բաղկացեալ գիւղ մ'է: Նոյնպէս Փրանսայի Աէթ քաղաքին մօտակայ քաղաքները գիւղերու վերածուած են: Տօմպ գաւառի բնակչաց կէսը 50 տարի առաջ ջերմի ենթակայ էր և կենաց միջինը 21 տարի էր. այժմ չնորձիւ առողջապահիկ միջոցներու ջերմը նուազած և կենաց միջինը 40ի հասած է:

Բրինձի մշակութեան յատկացեալ հողերը ճահիճներու նման կ'իլևասեն: Իտալիոյ Բիէմոնթէ գաւառն որ բրինձի արտադրութեան կեդրոն մ'է, իր բնակչաց % 85—90ը ջերմի ենթակայ էր: Իտալիոյ մօկլիզօ գիւղաքաղաքը որ 2500 բնակիչ ունի, տարուան 9 ամիսներուն մէջ 14000 ֆրանքի +նէն կ'գործածէր: Թիւրէնի բժշկական թերթը հաշուած է որ 16 հարիւրորդալիտր բրինձի արտադրութիւնը մարդու մը կեանքը կ'իմացնէր:

—Եւրոպացիք չորցնելով իրենց ճահիճները և ճահճանման մակերեւոյթները ուրդմամբ (drainage) և այլ եղանակներով, և մասնաւոր ծառերու տնկմամբ բարելաւելով այդ տարածութիւնները, և բրինձի մշակութիւններն առողջապահական օրինաց համաձայն կատարելով, շատ անդեր գրեթէ արմատախիլ ըրած են ջերմը: Գորսիքայի ճահիճները չորնալէ առաջ մահե-

րու հարիւրին 81ը պարբերական ջերմի հետեւանք էին, այժմ մահերու 300էն մին այդ հիւանդութեան կրնայ վերագրուիլ:

Այս հիւանդութեան դէմ ամէնէն աւելի կռուողն Իտալիոյ կառավարութիւնն իսկ տարեկան հազարաւոր զոհեր կուտայ անոր: Ըստ նորագոյն վիճակագրութեան մը, այդ կորուստներու թիւն 1900ին 15865 էր, անկէ ի վեր տարուէ տարի կ'նուազի և 1907ին միայն 4160ի իջած է:

Պուլկարիոյ փոքր երկրին 50,000նոց բնակին մէջ 1908ին 6377 անձեր այս հիւանդութեամբ դարմանուած են հիւանդանոցներու մէջ, յորոց 79ը մեռած, 541ը զինուորական ծառայութեան անյարմար դատուելով արձակուած են: Դժբաղդաբար ի մեզ այս հիւանդութիւնը շատ աւելի տարածուած է, և անհամեմատ աւելի կորուստներ կ'պատճառէ: Մօտէն քննենք:

Ասիոյ և նամանաւանդ Ասիական Թուրքիոյ արեւմտեան և հարաւային մասերու մէջ ճահիճներն և ճահճանման տարածութիւններն ամենուրեք կ'զանուին և մեծամեծ զոհեր կ'պատճառեն բնակչութեան:

Կ'ցաւիմ որ այս հիւանդառիթ կեդրոններու և տարածութեանց մասին վիճակագրական ցուցակներ գոյութիւն չունին ի մեզ՝ լիասին մեծութիւնը ցուցնելու համար, առ այս Առողջապահական Ժողո-

վոյն ըրած մեր զիմուններով բան մը չկըր-  
ցինք ձեռք ձգել: Պիտի ջանամ ինձ ծա-  
նօթ մէկ քանի օրինակներով գաղափար  
մը տալ այս հիւանդութեան աստիճան ա-  
ղէտի մասին:

Իզնիկի լճին շուրջ բոլորը, նամանա-  
ւանդ արեւելեան եզրն ընդհատական  
ջերմի կարեւոր բոյն մ'է: Արեւելեան  
ծայրն հաստատուած Նիկիոյ նշանաւոր  
պատմական քաղաքը գրէթէ բնաջինջ ե-  
ղած է ու գիւղի մը վերածուած է այսօր  
Իզնիկ անուամբ: Այս գիւղի բնակիչք ճահ-  
ճային ախտաժէտութեամբ վարակեալ են,  
աղաքը խոշոր փորով ճիւղեր են, և  
երիտասարդները դալկահար, մեռելափայ  
և առանց կորովի արարածներ են, իսկ  
չափահաս ու ծեր գրէթէ չկայ, հոս 40ն  
անցնողներ չեն գտնուիր: Կիները շատ ա-  
ւելի գոհ կ'երթան, որով և 35—40 տա-  
րեկան այրեր 3—4 անգամ ամուսնացած  
են: Այս գիւղի բնակչաց թիւը բնականա-  
բար չաւելնար:

Պրուսայի Հայոց առաջն. փոխանորդը  
կ'պատմէր ինձ անցեալները թէ, մէկ քանի  
տարի առաջ իր Վիճակին վերաբերող այդ  
գիւղն այցելելով, եկեղեցւոյն վրայ քա-  
հանայ մը կարգած և Թաղ. Խորհրդոյ մար-  
մին մը ընտրած է. երկու տարի վերջ այցե-  
լելուն տեսած է թէ Թաղ. Խորհրդոյ հինգ

անգամներն ու քահանան մեռած ու եկե-  
ղեցին փակ մնացած էր, զոր տեսնելով  
ինքն ալ խոյս կուտայ...:

—Մի այլ օրինակ. Տրամայի ենթակայ  
Սարը Շապան հովիտի եօթը գիւղերը 6—7  
հազար հոգիի բնակչութիւն մ'ունէին, և որք  
իրենց առողջութեամբ ու կաղմով նշանա-  
ւոր էին. անոնցմէ անուանի ըմբիշներ կ'եւ-  
լէին: Ասկէ շուրջ 60 տարի առաջ գայմա-  
դամ մը Գարա Սուրի գետէն այդ հովիտը  
ջուր մը բերած է իր երկու ջրաղացներուն  
համար, սակայն առանց այդ ջուրի ելքն  
ապահովելու, որով և ջրաղացներէն ելլող  
ջուրը հովիտին մէջ ցրուած է, և յորմէ  
յառաջ եկած է ընդարձակատարած ճահիճ  
մը: Իսկէչէցի աղղեցիկ անձ մը շուրջ 30  
տարի առաջ, վերոյիշեալին հետեողու-  
թեամբ, իր ջրաղացին համար ջուր բերած  
է այդ հովիտը, առանց այդ ջուրի գնացքն  
ապահովելու, յորմէ յառաջ եկած է մի  
այլ ճահիճ:

Այս երկու ճահիճներն այդ հովիտին  
բնակչութեան առողջութեանը խանգարած  
են, և այսօր 6—7 հազար բնակիչներէն  
միայն 1500 անձ մնացած է այդ եօթը  
գիւղերուն մէջ, ամենքն ալ նիհար, զեղ-  
նած, տկար, նման Իզնիկի բնակչութեան,  
և որք, ըստ այդ կողմերէ բժիշկի մը վկա-  
յութեան, տասը տարիէն իսպառ բնաջինջ  
պիտի ըլլան:

Պրուսայի հովիտը 32 քիլոմետր երկարութիւն ու 10 քիլոմետր լայնութիւն ունի և Քէշիշ ու Գաթըրը լեռներու շղթաներուն միջև ձգուած է : Գաթըրը լեռանց ստորտը քերող գետին ընթացքը լեցուած ըլլալուն՝ 34,000 անտիւմ տարածութիւն ձահիճի վերածուած է, որ տարւոյն վեց ամիսները ջուրով կ'ծածկուի և շուրջ բոլորի գիւղերուն ջերմի հիւանդութեան բոցն եղած է այդ գիւղերուն բնակիչներուն % 25ը ջերմոտ է : Իսկ Քէշիշ լեռան շղթային երկայնքն ընթացող գետը լաւ հոսում ունենալուն՝ այն կողմի գիւղերն և Պրուսայի քաղաքը գրէթէ զերծ էին այդ հիւանդութենէն, բնակչաց հարիւրին 5—8ը միայն ընդհատական ջերմի կ'ենթարկուէին ամառնային եղանակին, սակայն մէկ քանի տարիներէ ի վեր՝ առանց գաշտի այդ մասին տափարակութիւնը նկատի առնելու՝ անց բրինձ մշակելնուն՝ գաշտի այդ մասերը գրէթէ ձահիճի վերածուած են, որով և ջերմը մեծամեծ աւերներ կը գործէ : Անցեալ տարի երկր. նախարարութեան կողմէ այս մասին քննութիւն մը կատարելու հաստատեցի թէ կան գիւղեր ուր ջերմը գրէթէ անմասօթ էր, և այժմ բնակչութեան % 20-40-60-80-90ը ջերմէ կ'առուալի : Այս ըսուածը չափազանցութիւն չհամարուելու համար՝ պիտի չամ մէկ քանի օրինակներ :

Սամանը գիւղը (500 բնակչօք) այցելելով հաստատեցինք թէ % 80 հիւանդ կար, և տարւոյն մէջ 20 մահ պատահած էր : Մուխթար Ապախըրահման աղան պատմեց թէ ինն հոգիէ բաղկացած ընտանիքէն երեք մահ եղած է տարւոյն մէջ և երեք հիւանդ ունի : Այս գիւղին մէջ մեզ հետ ընկերացող քաղաքապետութեան բժիշկի վկայութեան նայելով՝ մէկ քանի տարի առաջ ջերմ չկար :

Արապա Եաթաղը 400 հոգինոց Կիւրճի գիւղն որ բրինձ մշակող Հաճի էվաս, Տիքէնճիգ ագարակներու և Սամանը գիւղի բրինձանոցներէն խորապէս կ'ընտաուի, իր բնակչաց % 90ը հիւանդ էր, փոքրերը խոշոր փոքով ճիւղաղային վիճակ մ'առած էին և երկու տարուան մէջ 40 մահ ունեցած էին : Այս գիւղէն 90 ամեայ ծերունի մը ըսաւ թէ իրմէ դատ՝ գիւղացիք գրէթէ ամենքն ալ ջերմէ կ'առուալին ու շատ տուներու հիւանդներ՝ ջուր մը տուող առողջ մէկը չունին :

—Սամանն ծովեզերեայ վաճառաշահ քաղաքը ծովի մօտ ընդհատական ջերմի բոցն ձահիճ մ'ունի. մէկ քանի տարիներէ ի վեր մասամբ փակուած, սակայն դեռ կը շարունակէ իր շահատակութիւններն և ամառնային եղանակին վեց ամիսներ բնակչութեան մեծ մասն ընդհատական ջերմի կ'ենթարկէ :

— Սեւանիկի երկրագործական վարժա-  
րանն ևս այս հիւանդութեան բոյն մ'է ,  
որ յառաջ կուգայ իր դրացի փոքր ճահիճէ  
մը , և աւելի իր խոնաւ հողերն ուրդելու  
համար բացուած էէնքէկներէն՝ որք բա-  
ւական շեղութիւն չունենալնուն՝ ճահ-  
ճանման մակերեւոյթներու վերածուած են ,  
ուր մեկոյներ կ'վժան :

— Ինձի ծանօթ Սեբաստիոյ , Հալէպի ,  
Ստամայի , Զմիւռնիոյ և Սնդրիանուպոլսոյ  
վիլայէթներուն և Նիկոմիդիոյ ու Սամսոնի  
սանճագներուն մէջ կրնամ թուել այս հիւ-  
ւանդութեանց յատուկ բոյներ , զորս աւե-  
լորդ կ'համարիմ յիշել , երկարաբանութենէ  
խոյս տալու համար :

Զկարծուի սակայն որ բարձր դիրք ու-  
նեցող երկիրները զերծ են այս հիւանդու-  
թենէն . այն տեղերու ճահճանման մակե-  
րեւոյթները միւսնոյն ախան յառաջ կ'բե-  
րեն : Զոր օրինակ Սեբաստիոյ քաղաքը ,  
ծովէն 1300 մէրրի չափ բարձր ու ճա-  
հիճներէ զերծ է , սակայն իր բնակչաց հա-  
րիւրին 60ը ջերմէ կ'բռնուի ամառնային  
եղանակին , զի քաղաքն աղտոտ է , փո-  
ղոցները գէշ սալայատակեալ են , ամէն  
կողմէ ջուրեր կ'հոսին , փողոցները մշան-  
ջենական տիղմ կայ , որով և քաղաքին  
աւարածութեան կէսը ճահճանման մակե-  
րեւոյթ կրնայ համարուիլ :

— Այս հիւանդութեամբ և կամ անոր  
հետեանօք մահացելոց մասին վիճակա-  
գրական տեղեկութիւններ և ցուցակներ  
պերճախօս կերպով մեզ պիտի ցուցնէին  
մեր երկրին տարեկան վնասն ճահճախօսի  
երեսէն . սակայն դժբախտաբար չկան ի մեզ  
վիճակագրական ծանօթութիւնք , և այս  
մասին , ինչպէս ըսինք , Առողջապահական  
Ժողովոյն բրած մասնաւոր դիմումովս ս  
և է տեղեկութիւն և կամ ցուցակ չկրցինք  
ձեռք ձգել : Աղէտին մեծութիւնը չափելու  
մասք դիմեցի զանազան վիլայէթներու և  
կեդրոններու խոհուն անձնաւորութեանց ,  
բժիշկներու , առողջապահական քննիչնե-  
րու , որոնց սուած տեղեկութեանց վրայ  
հիմնուելով՝ Օսմ . Կայսրութեան մէջ այս  
հիւանդութեամբ և կամ անոր հետեանօք  
աւարեկան կորուստի թիւը կէս միլիոնէն  
սուազ ըլլալու չէ . այս անուի կորուստ  
մ'է :

Այս հիւանդութեան գլխաւոր գեղը ,  
ինչպէս գիտէք , Բահան է , անոր կե-  
ղեւի փոշին և աւելի աղերը , նամանա-  
ւանդ ծծմբատը(\*) մեծապէս կ'գործածուի ,

(\*) .— Օրական 10—15 կլամ գնագնայի  
փոշի և կամ 1/2—1 կրամ քինինի ծծմբատ  
(sulfat de quinine) կ'գործածուի ընդհան-  
րապէս , քինինի այլ աղերն ալ միւսնոյն

0007  
65

և մեր Անաստուրի ժողովուրդն իր գրպանը կ'կրէ զայն . . . :

Մաքսային վարչութիւններէ մեր քաղաք սեղեկութեանց նայելով տարին շուրջ 25,000 քիլոկրամ քնազնայի ծծմբատ կը մանէ ի Թուրքիա, հաւանականաբար 10 հազար քիլո մ'ալ քնազնայի այլ աղեր և զնազնայի կեղև, որք ընդամէնը կ'արժեն շուրջ 60,000 ոսկի երկիրն համար, իսկ ժողովրդեան համար՝ զեղազործի հաշիւով՝ 200,000 օսմ. ոսկի:

Պէտք է խոստովանիլ թէ մեր ժողովրդեան ջերմի ենթարկուողներուն մէկ փոքր ժասը միայն ի վիճակի է Էնկի և Բժիշկի դրամ առլ. գաւառացիներէ ոմանք հազիւ 100ին տասը այս զեղեբէն ուսող կ'համարին, որով եթէ ամենքն ի վիճակի ըլլային դարմանուելու՝ պարտ էին վճարել տարեկան 2 միլիոն օսմ. ոսկի:

Առողջապահական ժողովը նկատի առնելով այս սոսկալի հիւանդութեան զէմ աղքատաց բոլորովին անապաշտպան մնալը, անցեալ տարի գովելի խորհուրդն ունեցաւ 4—5,000 ոսկուց զոնողութեամբ քիմիկի ծծմբատը ճնշմամբ հաստատուն զանգուածներու վերածելով՝ աղքատաց ձրի բաշխել առլ կայարութեան զանազան կողմերը, նպատակաւ կ'գործածուին: Մկնդեղի և երկաթի բաղկացութիւններ կ'գործածուին ջերմոտներու կազմը զորացնելու համար:

զրկելով իւրաքանչիւր վիլայէթի 18—25 քիլոկրամ, ըստ այս հիւանդութեան կողմէ այդ անդերու կարեւորութեան, և առանձին սանձագներու՝ 10—14 քիլոկրամ:

—Թանկնի խմբագրութիւնը ջերմի ենթակայ ժողովրդեան օժանդակութիւն մը ընելու նպատակաւ ժողովրդային հանգանակութիւն մը բացաւ և փոքր զանգուածներու վերածեալ Էնկի ձրիաբար այդ խեղճերու արամազրութեան աակ դրաւ. սակայն ո՛չ ոք եկաւ խնդրել անկէ . . . և սա բնական է: Չրի տրուած գիրքէն ու զեղէն ո՛չ ոք կ'ուզէ օգտուիլ. գուցէ և կը կասկածին իսկ անոնց արժէքին մասին. «Կէր է ա՛նքն քո՞վ քախել զայն»: Այդ միջոց ի գործ դրած է ու կ'ընէ իտալական կառավարութիւնը Էնկի համար, և զեղագործները կառավարութեան Էնկի անուան աակ աժան գինով կ'ծախեն կառավարութեան կողմէ աժանագին Էնկի զանգուածներ, և ժողովուրդը մեծապէս կ'օգտուի անոնցմէ: Այս միջոցը կ'առաջարկենք և մենք մեր Առողջապահական ժողովին, զի արդէն սկսած ենք համոզուիլ թէ ցրուուած Էնկին իր նպատակին չձառայեր:

Իրուատելով հանգերձ Առողջ. ժողովոյն այս մարդասիրական ձեռնարկը, ցաւի սիրա կ'ծանուցանենք թէ շատ աննշան է այս գթութեան նպատար մեծ պէտքին

առջև, և հարկ է տասնապատկել կղած զոհողութիւնը, փոքր ի շատէ արդիւնք մը ձեռք բերելու համար:

Պուլկարիոյ կառավարութիւնն որ մեր երկու վիլայէթը կ'ներկայացնէ՝ անցեալ տարի 120,000 ֆր.ի քինին ձրի բաշխած է մի քանի ջերմոտ կեդրոններու համար:

Սամսոն ծովեզերեալ 30,000 բնակչօք քաղաքի դեղարանաց մէջ ամէնէն աւելի ծախուածք քինինի ծծմբատն է: դեղագործք օրական 15 սակւոյ քինին կ'ծախեն ամառնային եղանակին, հինգ սակի մ'ալ գեղավաճառք: այդ առնուած 20 սակւոյ գեղին գոնէ 15ը քաղաքացիք կ'գործածեն, որով և վեցամսեայ եղանակին մէջ 2,700 սակւոյ քինին կ'գործածեն Սամսոնցիք, գոնէ 500 սակւոյ չափ տարուան միւս վեց ամիսներուն, որով քինինի համար տարեկան ծախսերնին է 3200 և կամ առնուազն 3000 սակի: Սա կ'ցուցնէ թէ ս'ըչափ փոքր է Ասոջլապահական ժողովոյ բրած մարդասիրական զոհողութեան քանակն ամբողջ թուրքիոյ աղքատ դասակարգին մեծ պէտքին առջև:

Բիւնը և կամ անոր աղերն անցողական միջոցներ են ջերմի հիւանդութեան դէմ, պէտք է հիւանդութեան պատճառները այսինքն ճահիճներն և ճահճաման տարածութիւնները բառնալ մէջտեղէն, և առ այս հարկ է:

Ա.—Ճահիճներն ու խոնաւ հողերն ուրդմամբ (drainage), խրամներու (խէնտէկ) բացմամբ և այլ միջոցներով չորցնել: Ասիկա կառավարութեան վրայ մեծ բեռ մը չըլլար, զի եթէ այդ խոնաւ տարածութիւնները չորցնող ընկերութեանց շնորհունին, դիւրութեամբ պիտի կազմուին այդպիսի ընկերութիւններ: Պրուսայի հովիտին մէջ Գաթըրը լեռանց չղթային ստորոտը երկարող գետակի ընթացքին լեցմամբ յառաջ եկած 34,000 րէնէ-օի ճահճուտ տարածութիւնը, ըստ Նափաայի ճարտարագէտ Մ. Ռալօթթիի հաշիւներուն, 30 հազար սակի ծախքով այդ գետին ընթացքը բանալով՝ կրնայ չորնալ, և այդ տարածութիւնը բերրի հողի կ'վերածուի, որոյ րէնէ-օը կրնայ արժեկ 3—5 օսմ.սակի, որ ինքնին շատ շահաւոր գործ մ'է: Հարկ է միայն կառավարութեան կողմէ գործին մղում տալ:

Սամսոնի ճահիճը կարելի է 10,000 սակիով ամբողջովին չորցնել ու այդ տարածութիւնը մշակելի հողի վերածել: Եթէ նոյն իսկ յառաջ եկած տարածութիւնը մշակելի հող չըլլայ, այդ պահանջուած զոհողութիւնը քաղաքի բնակչութեան երեք տարուան միջոցին րէնէ-օի համար բրած ծախքը կ'ներկայացնէ, առանց հաշուելու բժիշկի ծախքը, և հիւանդոտ վի-

ճակի հետևանք կորուսար: Այստեղ ևս գործն ի գլուխ հանելու համար միայն ձեռնեքցութեան պէտք կայ կառավարութեան կողմէ:

Կ. Պոլսոյ մտակայ Ատաբաղար քաղաքը ջերմի կեդրոն մ'է, և այս իր արեւելեան կողմը 5 քիլոմէրը հեռաւորութեամբ՝ շուրջ մէկ ժամ շրջապատով Չաւուշ Կէօլի անուն ճահիճի մը շնորհիւ, որ ձմեռը մակոյկով նաւարկելի լճակի վիճակ մը կ'անէ ու ամառը ճախճախուտի կ'վերածուի: Լսածիս նայելով, եւրոպական քնկերութիւն մը առաջարկած է այս ճահիճը չորցնել, և վարելահողի վերածելով անոր տիրանալ, սակայն կառավարութիւնը չէ թոյլատրած:

Պուլկարիոյ փոքր կառավարութիւնն տասն միլիոն ֆր. ի փոխառութիւն մը կ'ընէ շատ մը ճահճուտ մակերեւոյթներ ուղմամբ չորցնելու համար: Եւ անշուշտ այդ գործողութեամբ յառաջ եկած մշակելի հողերը լայնօրէն պիտի վճարեն փոխառութիւնը, և ժողովրդեան առողջութիւնը խանգարող տարածութիւններ մէջտեղէն պիտի վերանան:

Բ.—Այն ճահիճները որք մեծ տարածութիւններ կ'ներկայացնեն, որոնց չորցնելը մեծ ծախուց կ'կարօտի, պէտք է ասոնց ու բնակութեանց միջև արհեստական թումեր ստեղծել, խիտ ծառաստաններու հնարմամբ և այլ միջոցներով. և կամ բնակչութիւններն այդ հիւանդութեանց բոյն համարուած վայրերէն այլուր փոխադրել. որպէս հարկ է ընել Իզնիկի համար:

Գ. Բրինձի մշակութեան համար առողջապահական օրինաց հետեւիլ, և գործադրել միայն այն տեղերն ուր ջուրն հոսում կրնայ ունենալ և բնակութեանց կեդրոններէ բաւական հեռի: Պրուսայի հովիտին համար մեր տուած օրինակին մէջ յարգուած չէին այս երկու պայմանները: Ըստ մեր ընդունած նորագոյն տեղեկութեանց, թէպէտ շատեր Պրուսայի հովիտին մէջ ուղած են այս տարի բրինձ մշակել, սակայն կառավարութիւնն իմ անցեալ տարուան տեղեկագրին վրայ կրթնելով՝ արտօնած չէ:

Առողջապահական մարմինը պարտի իր ձայնն և հակողութեան իրաւունքն ունենալ բրինձի մշակութեան խնդրոց մէջ:

Դ. Անթափանց հողերը ջրարբի ծառեր տնկել, որպէս ուռի, յասոնի, հացի, սօսի, և էօպիֆրէս, որք թէ՛ այդ խոնաւ տարածութեանց ջուրը կ'ծծեն, և թէ՛ զայնս իրենց արմատոց միջոցաւ հողի խորերը կ'առաջնորդեն:

Ե. Բաղաքապետութեանց յանձնարարել և նոյն իսկ ստիպել, որպէս զի իրենց

տեղական միջոցներով կատարեն քաղաքին  
և կամ գիւղերուն փողոցները մաքրելը ,  
ուղղելն և սալադաստակելը : Ի հարկին  
նպաստներ ընելով առ այս անոնց՝ կառա-  
վարութեան կողմէ : (\*)

Այս առատական միջոցները կառավա-  
րութեանց և քաղաքապետութեանց կողմէ  
և կամ անոնց առաջնորդութեամբ ընկե-  
թեանց կողմէ գործադրուելու են . իսկ ան-  
հատք ի նչ միջոցներով կրնան իրենց առող-  
ջութիւնը պահպանել այսպիսի հիւանդա-  
սիթ միջավայրերու մէջ :

Այս մասին առողջապահից տուած խոր-  
հուրդներն են .

1. Բարձանց վրայ բնակիլ , զի մթեղ-  
ները շատ չեն կրնար բարձրանալ :

2. Բնակարանաց դուռներն ու պա-

(\*) .— Ոմանք այս այլազան միջոցնե-  
րուն վրայ կ'յաւելուեն և գիշերներն ճահ-  
ճաց մակերեւոյթին մօտերը խոտեր վառել ,  
ուր կ'երթան այրիլ մթեղները , և կայուն  
ջուրերու իւրաքանչիւր քառ . մէթրին 5  
կրամ քարիւղ լեցնել , որով այդ ջուրերն  
ապրող մթեղներու թրթուրները չնշանեղձ  
ըլլալով կ'փճանան : Սակայն այս միջոց-  
ներն աւելի ամուրիչ են քան թէ արմա-  
տական դարմաններ :

տուհանները ճահիճներու հակառակ կողմը  
բանալ , և աւելի այնպիսի թելահիւս վան-  
դակներով գոցել , որոնց ծակերէն մթեղ-  
ներ չեն կրնար անցնիլ :

3. Գիշերները վերջալոյսէն առաջ  
տուն մտնել և մութին տունէն դուրս  
չելնել , զի մթեղներու գործունէութիւնն  
աւելի գիշեր ատեն տեղի կ'ունենայ , և  
անկողինները մթղակակալով պաշտպանել :

4. Կաւ անունդ առնել , մեծ յոգնու-  
թեանց չենթարկուիլ և առօրեայ 25 հա-  
րիւրորդակրամ + 1/2 րնդունիլ քաջառողջ  
մնալով հիւանդութեան չենթարկուելու  
համար :

Բ.— Ֆ Ր Ա Ն Կ Ա Խ Տ

Ֆրանսիական հինաւուրց հիւանդութիւն մ'է երկրիս համար, սակայն նոր է Ասիական Թուրքիոյ մէջ: Մեր ծովեզերեայ միջազգային քաղաքները վարակուած են նախ և այդ քաղաքները պանդխտողները տարած են զայն իրենց բնագաւառները, իբր նուէր տալով այդ ավիրողիտեան հիւանդութիւնն իրենց սիրելիներուն, նշանածին, կնոջ, զաւակաց ու ընտանեաց: Այն գաւառներն որ իրենց երկրի անբերութեան և կամ աշխատութեան չգոյութեան հետեւանօք աւելի պանդխտ կուտան, անոնք բնականաբար աւելի վարակուած են այս ախտէն: Վարակեալ կեդրոններու գլուխը կ'գտնուի Գասթէ-մոնիի վիլայէթն և Պօլուի սանձազը, Էրզրումի, Վանայ, Պիլիլիսի, Տիարպէքիլի, Սեբաստիոյ, Էնկիւրիի, Պրուսայի, Ատանայի, Պէրութի ու Հալէպի վիլայէթներն ունին վարակեալ վայրեր, դժբախտաբար վիճակագրական տեղեկութեանց չգոյութեան պատճառով, դժուարին է մեզ այս զանազան վայրերու մասին ճշգրիտ գասակարգութիւն մ'ընել և իւրաքանչիւրին վարակման աստիճանը ցուցնել:

— Այդ վարակեալ երկիրներն այցելու-

զաց, անդ ապրող բժշկաց, և առողջապահական քննիչներու վկայութեամբ հաստատուած է թէ Ֆրանսիայտը մեծ կոտորած կ'ընէ, կիներն ստ'պ կ'վիժեն, նորածինները հիւանդոտ կ'ծնին և կամ մանկական առաջին շրջաններուն իրենց ծնողներէն ժառանգած ախտին նշաններն երեան կուգան ու կ'մեռնին, և շատեր ալ արբունքի հասնելէ ետք և կամ ի չափահասութեան՝ այդ հիւանդութեան հետեւանօք քիթերնին կորսնցնելէ, քիմքերնին ծակելէ, կիսահարութեան կամ անդամալուծութեան ենթարկուելէ, ուղեղային խանգարումներ, աչաց կուրութիւն և փորոտեաց մէջ ուռեր ունենալէ, և այլ տկարութեանց ենթարկուելէ ետք կ'մահանան. և այս կորուստներն այնքան շատ են, որ ըստ ոմանց եթէ կէս դար շարունակուի, մասնաւոր գաւառներ ու նահանգներ բոլորովին պիտի ջնջուին: Առողջապահական ժողովը չկրցաւ այս մասին մեզ վիճակացոյցներ ներկայացնել, քայց մեր այդ կողմերն այցելող, ապրող զիտակ անձերէ քաղուած տեղեկութեանց, հաւանական հաշիւներուն վրայ կռթնելով՝ այս երեսէն Թուրքիոյ ժողովրդեան տարեկան կորուստը մէկ քանի հարիւր հազար կրնայ հաշուուիլ: Այս կորուստն երթալով կ'աճի, զի վարակեալ մը եթէ ինքը բաւական

ժամանակ մը ապրի իսկ, իր զաւակը կամ թոռն այդ հիւանդութիւնը կ'ժառանգէ ու անկէ կ'մահանայ, որով ամէն վարակեալ անձ ուշ թէ կանուխ կ'փճանայ, և եթէ նկատի առնենք մասնաւոր գաւառակներու, գաւառներու ժողովրդեան գրեթէ բոլոր ընտանեաց մէջ այս հիւանդութեան ենթարկեալ մէկքանի անդամոց գոյութիւնը, զիւրաւ կրնամք երեւակայել այս ահուկի հիւանդութեան սարսափելի հետեւանքներն մեր երկրին համար:

Պրանկախար մանրէական հիւանդութիւն մ'է, վարակումը տեղի կ'ունենայ մարմնոյ մակերեւոյթին վրայ մորթազերծ ո՛ր և է անցքէ մը. այդ տեղւոյն վրայ շուրջ մէկ ամիսէն հարձր կէռ յը (chancre induré) երեւան կ'եղնէ, որ հիւանդութեան առաջին նշանն է, և որով կ'սկսի հիւանդութեան առաջին աստիճանը, որ մի քանի եօթնեակէն կ'անհետանայ, հիւանդութիւնը ենթակային արեան մէջ կ'թափանցէ, ուրկէց մի քանի եօթնեակէն հիւանդութեան թոյնը դուրս կ'եղնէ, մարմնոյ մորթին վրա՛հարձր-խիւնէր և բերնի ու լեզուի հուզածազանթից վրայ աստիճանէ կէռ յը յառաջ բերելով, որոնցմով կ'սկսի հիւանդութեան երկրորդ աստիճանը: Այս նշանները մի քանի տարիներ պարբերաբար երեւան գալէ ետք՝ կ'անհետանան, և ապա մարմնոյ արտաքին

մակերեւոյթին վրայ և կամ ներքին գործարանաց մէջ կեղեր կամ ուռեր յառաջ կուգան, որոնցմով կ'սկսի հիւանդութեան երրորդ աստիճանը:

Առաջին և երկրորդ աստիճանի մէջ գրասուողներու կեղերն ու կարմրութիւնները փոխանցման կ'ծառայեն, իսկ երրորդ աստիճանի կեղերն հիւանդութիւնն չեն տար, ուստի և այդ հիւանդներն այլոց համար վաճառու չեն:

Այս հիւանդութիւնը միայն սեռական յարաբերութեամբ չէ որ կ'փոխանցի, այլ և վարակեալի մը մարմնոյ հիւանդ մասանց, կամ անոնց հազարգ գանուող զգեստեղինաց և կամ գործածած առարկայից ճրպամբ: Եւ որովհետև ի մեզ ընտանիքի մը բոլոր անդամներն իրարու հետ շատ աւելի մօտ կ'ապրին, միլենոյն ամանէ կ'ուտեն, միլենոյն առարկաները (զգալ, պատառաքաղ, ջուրի բաժակ, ևն.) կ'գործածեն, փոքր աղեկներու հանդէպ իրենց համակրանքն ու գուրգուրանքը զանոնք համբուրելով կ'արտայայտեն, ուստի և վարակումն աւելի շատ կ'ըլլայ ի մեզ: Վարակեալ կեղրոններու մէջ հազուադէպ չէ տեսնել այս ախտին գանազան աստիճաններուն ախտանիշերը կրող ամեղ մանուկներ, պատանիներ ու ծերունիներ:

Այս հիւանդութիւնն ին քաղաքակիրթ

ազգերը՝ Չինացիք, Հնդկիք ու Արաբացիք  
զիտացած են դարմանել, զոր աւելի յառաջ  
տարած են այժմու գիտունները :

Այս հիւանդութեան կատարեալ բուժումն  
անկարելի կ'կարծուէր, և զեռ այդ կարծի-  
քէն են ի մերայնոց շատեր, զի դարմանով  
անհետացեալ կարծուած հիւանդութիւնն  
յանկարծ երևան կ'ելլէ, և դարմանեալի մը  
զաւելին կամ թոռան վրայ ժառանգակա-  
նութեամբ այս հիւանդութիւնը կ'տեսնուի,  
որով և շատեր իրր անբուժելի հիւանդու-  
թիւն մը անդարման կ'թողուին, զիտելով  
նամանաւանգ թէ դարմանի ենթարկեալք  
թէ ո՛չ ժամանակ մը ետք իրենց մարմնու-  
արտաքին ախտանիշերը կ'կորսնցնեն, որք  
ապա կրկին երևան կ'ելլեն :

Այո՛, առանց դարմանի մնացողաց և  
թերի դարման ընդունողներու համար ճիշդ  
են այս ամէնը, սակայն կատարեալ կերպով  
դարմանուողները շատ շատ մինչ երկրորդ  
աստիճանի նշանները կ'ունենան, սակայն  
ո՛չ երրորդ աստիճանիները, և թէ այլևս  
իրենց յաջորդաց ժառանգ չեն թողուր այս  
հիւանդութիւնը : Այժմ ներելի է յանուն  
զիտութեան ըսել թէ Ֆրանկախոյն երեւոյր-  
ուան դարմանով կարելի է կարարեւապէս բուժել  
ուստի և ենթարկեալք առանց յուսահա-  
տելու դարմանուելու են (\*) : Շատ քիչ հի-

(\*).—Նկատի չեմ առներ հոս երկրիսի

ւանդութիւն կայ որ Ֆրանկախոյն չափ ու-  
սումնասիրուած է, և որոյ ապահով դար-  
մանը գանուած է. ուստի և հարկ չէ յու-  
սահատիլ, և ոչ ալ ասիական սխալ ամօթ-  
խածութեամբ մը զայն պահել : Հիւանդ-  
ները վստահ կրնան ըլլալ թէ՛ շատ յարգե-  
լի ու պատկառելի անձնաւորութիւններ,  
նոյն իսկ պատկալիք գլուխներ և սուրբ  
համարուած անձնաւորութիւններ (Յոր)  
ենթարկուած են այս հիւանդութեան :

—Սակայն պիտի ըսուի թէ՛ ամէն ոք  
ի վիճակի չէ բժշկական խնամոց զիմելու  
և երեք տարիներ ծախքեր ընելու : Այո՛,  
և այդպիսեաց համար են հիւանդանոցները,  
ուր կարելի է զիմել խորհրդածութեան,  
և ի հարկին հոն պառկելու համար(\*) :

Եւրոպիոյ ամէն հիւանդանոց խորհրդ-  
գածութեամբ և կամ հիւրընկալութեամբ  
կ'դարմանէ Ֆրանկախոյն ենթարկեալները :

606 անուանեալ գեղի (Աբուէնէ պէնոն) նե-  
րարկմամբ արմատական դարմանի մասին,  
զի այդ գեղն իր ազդեցութեան լիակա-  
տար փորձը տուած չէ զարգ :

(\*).—Փրանկախոսաւորի մը համար շատ քիչ  
անգամ պէտք կ'ըլլայ հիւանդանոցի մը մէջ  
պառկիլ : Շատ անգամ մէկ քանի եօթ-  
նեակն և կամ մէկ քանի ամիսն անգամ մը  
խորհրդածութեան զիմելը բաւ է :

Աստուծոյ զատ կան նաև Քրիստոսի ստու-  
րաց յատուկ մասնաւոր հիւանդանոցներ  
մեծ քաղաքաց մէջ :

Մեր մէջ երբեմն հիւանդանոցներուն  
մէջ ամբողջութեան հիւանդները չէին ըն-  
դունուեր, և անոնց հանդէպ կ'նայուէր  
իբր գլխութեան ու կարեկցութեան անար-  
ժան անառակ անձեր. որով և հարուստ-  
ները միայն կրնային դարմանուիլ իրենց  
դրամի ոյժով, իսկ խեղճ աղքատներն ան-  
կարող ըլլալով բուժման ծախս վճարել,  
երբ կ'բաղխէին Գլխութեան տուներուն  
(հիւանդանոցներուն) գուճները, անոնք ի-  
րենց առջեւ կ'գոցուէին, երեւնուն տալով  
մեղք մը որոյ շատ անգամ անգիտակից  
դոհերն են այդ խեղճերը : Անկեալին, թըշ-  
ուառին ու դժբախտին ձեռք կարկառած և  
գլխութիւն ու օգնութիւն հայցած  
ժամանակ՝ անոր թերութիւններ ու յան-  
ցանքներ վերագրելով խրատ տալն ան-  
գլխութիւն է :

Ասկէ շուրջ 15 տարիներ առաջ Ետի-  
գուլէի Ազգ. հիւանդանոցին բժշկապետ-  
ութեան կոչուելուս երբ տեսայ թէ ամբ-  
ողջութեան հիւանդութիւններ չեն ընդուն-  
ուիր այն տեղ, այդ անգութ ասօրինու-  
թեան դէմ սկսայ մաքառիլ, և օր մը այդ  
Հաստատութեան վարչական ժողովին մէջ  
ստիպուեցայ պօռալ. «Այս հիւանդութեանց

վարակմամբ ձեր վարչութեան յանձնուած  
Գլխութեան տունն ապաստանողները դա-  
ւառացիներ են, մաքուր եկած իրենց եր-  
կրէն, ու այստեղ ձեր երկրին մէջ, ձեր  
քաղաքացիներէն առած են այդ հիւան-  
դութիւնները, և զուք չէք ուզեր որ տեղ-  
ւոյդ վրայ անուած այդ ակտերէն բուժ-  
ուին, և կ'ուզէք որ անոնք ձեր այդ ազտոտ  
հիւանդութիւնները տանին իրենց երկիր-  
ներն և անով վարակեն իրենց սիրելիները .  
այդ անգլխութիւն է, ոճի՛ր մ'ի՛ք, և ես չպի-  
տի կրնամ ծառայել բարեգործական հաս-  
տատութեան մը մէջ, ուր ամէնէն սարսա-  
փելի չարիքն ի գործ կ'դրուի . . . » Ու  
վերջապէս յաջողեցայ ոչ միայն ամբողջ-  
եաններն ընդունիլ տալ, այլ և անոնց յա-  
տուկ մասնաւոր սրահ մ'ունենալ :

Այս պարագայիս մէջ ինծի մեծապէս  
նպաստեց Տոքդ. Ճէլալէտաօին Մուխթար  
պէյ, իր լրագրական հրատարակութիւննե-  
րովը, որուն պարտ կ'զգամ ի դիմաց այդ  
տեսակէտով դարմանուող խեղճ Հայերու  
չնորհակալութիւն յայտնել այստեղ :

Ետիգուլէի Յունաց հիւանդանոցը չհե-  
տեւեցաւ մեր օրինակին և ցարդ ամբող-  
ջութեանները չեն ընդունուիր անդ . . . երբ  
չեն կարող վճարմամբ մասնաւոր սենեակ  
ունենալ : Կ'իմանամ թէ այս մասին Կ.  
Պոլտոյ հիւանդանոցներուն մէջ բացառու-

Թիւն կազմող Յունաց հիւանդանոցն ալ պիտի ունենայ ամբողջաբաններու յատուկ մասնաւոր սրահ մը, երբ սկսուած յաւելուածական շինութիւնք աւարտին:

—Կառավարութիւնը պէտք զգացած է Ֆրանկախաի յատուկ հիւանդանոցներ բանալ նաև գաւառաց մէջ, սկսելով անշուշտ ամէնէն վարակեալ կեդրոններէն: Այսօր Գասթէժմունիի վիլայէթին մէջ կան եօթն հատ այս կարգի հիւանդանոցներ (Գասթէժմունի, Ինէպօլու, Զաֆրանպօլու ձիտէ, Պոյապատ, Բիւնդըր, Սինոպ) և չորս հատ ալ Պօլուի մէջ, (Պօլու, Էրէյլի, Պարթըն, (Տիւզճէ): Մեզ համար պէտք կայ ոչ միայն այս հիւանդանոցներուն թիւն աւելցնել այդ վարակեալ տեղերը, այլ և նմանօրինակ հիւանդանոցներ բանալ ուրիշ վարակեալ տեղերու մէջ, և խիստ հրամաններ տալ Կայսրութեան բոլոր կողմերը գլխաւոր հիւանդանոցներուն, որ դարմանեն ֆրանկախտաւորներն իրենց հաստատութեանց մէջ հիւրընկալելով, և կամ իրենց բժշկաց միջոցաւ ձրի խորհրդատուութեամբ և զեղատուութեամբ: Ի հարկին մասնաւոր սրահներ բանան անոնց համար, կարեւոր է և ստեղծել ֆրանկախաի դարմանումի համար մասնաւոր շրջուն բժիշկներ, որք զիւզէ գիւղ շրջելով, դարմանեն ֆրանկախտաւորները, անոնց ձրի զեղ տան, ու

իրենցինները չվարակելու համար առողջապահական խրատներ խօսին, և ի հարկին հծնֆերաններ ընեն այս հիւանդութեամբ վարակման առջին առնելու, և կարճ ժամանակէն դարմանուելով անկէ ազատելու մասին: Գովելի է ընդհատական ջերմի ենթարկելոց ձրի քիչն բաժնելը, սակայն ոչ նուազ կարեւոր է ֆրանկախաի ենթարկելոց սնդկային բազկացութիւններ և իւրիւ մասակարարելը: Առ այս մեր Առողջապահական մարմնոյն ուշը կ'հրաւիրեմ:



Գ. — ՅՈՒՔԱՅԻՆ ՈՒՌԱԿԱՆՈՒՅԻՒՆ

Ուռականութիւնը (tuberculose) մանրէական հիւանդութիւն մ'է, Բոխի մանրէներէն պատճառեալ, որոնց խմբումներուն շուրջը կ'կազմուին ուռիկներ (tubercule) հիւսուածոց բորբոքմամբ: Այս հիւանդութիւնը մարմնոյ գրէթէ բոլոր հիւսուածոց և գործարանաց (մորթ, ենթամորթեան խաւ, աւշային դրութիւն, յօդուածք, գեղձ, աղիք, ոսկոր, գանկուղեղ, ևն.) կրնայ պատահիլ, սակայն ամէնէն աւելի թոքերուն մէջ կ'ընէ իր շահատակութիւնները, և կ'անուանուի Բոխային ուռականութիւն (tuberculose pulmonaire), ժողովրդական լեզուով Բոխային, Վերեճ, որոյ յառաջացեալ վիճակը կ'կոչուի Բաշաբեկան (Phthisie), Բարեկ ցառ:

Ամէն հիւսուածոց ուռիկները կազմուելէ ետք կ'կեղաւորին (ulcérer) և թարախ մը կ'արտադրեն, թոքերու ուռիկներուն արտադրած թարախը հազի միջոցաւ թոքերէ դուրս կ'ելնէ իբրև խուխ:

Այս հիւանդութիւնն ուռիկներէ յառաջ եկած թարախի և խուխի միջոցաւ կը փոխանցի. մանրէալից թարախը կամ խուխը չորնալով փոշիի կ'վերածուին, և շնչառութեամբ թոքերու մէջ մուտք կը գտնեն, և այնտեղ կամ մարմնոյ հիւսուած

ճոց մէջ տեղի կուտան ուռիկներու կազմութեան:

Այս հիւանդութիւնը շատ հին է, սակայն երբեք այնչափ տարածուած չէ որչափ 19րդ դարուն: Թոքային ուռականութիւնը մեծամեծ կոտորածներ կ'ընէ նամանաւանդ մեծ քաղաքաց մէջ, ուր տեղի ունեցած մահերու մէկ հինգերորդը ուռականութեան գոհեր են: Ուռականութեան ամէնէն աւելի գոհ տուող եւրոպական քաղաքներն են Վիւրցպուրկ, Հավր, Պուտաբէշթ, Վիեննա, Ռուէն, Բեդերսպուրկ, Մոսկուա, Բարիզ: Եթէ այստեղ կանոնաւոր վիճակագրութիւն մ'ունենայինք, անշուշտ կ. Պոլիսը և մեր այլ քաղաքներն այս շարքին մէջ պիտի դնէինք, և հաւանականաբար վերջիններէն չպիտի ըլլային:

Մեր ընտանի կենդանիներէն եղազգիներն աւելի ենթակայ են այս հիւանդութեան, որոնց մաի, արեան և կաթի հում ճաշակմամբ կարելի է վարակուիլ, սակայն փոխանցման գլխաւոր միջոցը խուխն է, թարմ կամ չորցած վիճակաւ, ինչպէս ըսինք, և ոչ թէ հիւանդաց արտաշնչութիւնը՝ որպէս կ'ենթադրէ ժողովուրդը:

Թոքախտաւորները միշտ աջ ու ձախ թքնեղնուն՝ անոնց չորցած թուքի փոշին կ'տարածուի օդին մէջ, և կարելի է ըսել թէ մեծ քաղաքներու օդը գրէթէ միշտ

կ'պարունակէ այս հիւանդութեան փոշիներէն : Բարեբախտաբար դայն շնչողներն ամէնն այս հիւանդութեամբ չեն վարակուիր . վարակման համար ենթակայութիւն ունենալու է : Բացատրեմ . զօրաւոր ու քաջաոռջ անձ մը ուսականութեան և կամ այլ ո՛րէն է հիւանդութեան մը մանրէներն իր մէջ ընդունելուն՝ անոր արեան սպիտակ գնդակները կ'յարձակին անոր վրայ , դայնս կ'լլափեն ու բնաջինջ կ'ընեն , սակայն երբ այդ անձը տկար է ու վատաոռջ՝ (այսինքն ենթակայ) անոր սպիտակ գնդակներն ալ տկար կ'ըլլան , կը յաղթուին նորեկ մանրէներէն , այս վերջիններն իբր յաղթական՝ բոյն կ'ընեն հոն և հիւանդութիւնը կ'սկսի :

Ախտաբանութեան ու մանաւանդ թոքային ուսականութեան տեսակէտով անձի մը ենթակայութեան ամենէ աւելի նպաստող պայմաններն են մաքուր օդի ու սնունդի զրկողութիւն և չարքաշ աշխատանք : Այս երեք պայմանները միացած՝ մեծապէս կը սպառնան մեր խեղճ ժողովրդեան խոնարհազոյն դասին առողջութեան : Գիւղօրէից և փոքր քաղաքաց մէջ ժողովուրդն ընդհանրապէս օդի կողմէ մեծ զրկանք չի կրեր , սակայն մեծ քաղաքաց մէջ և նա՝ մանաւանդ ի կ . Պոլիս մեր հէգ գործաւոր դասակարգը մեծապէս կ'նեղուի և կ'տուժէ

իր առողջութեամբ , մանաւանդ խաներումէջ բնակող մեր գաւառացի պանդուխտները , և Օտալարներու մէջ բնակող մեր գործաւոր դասի ընտանիքները : Ընթերցողացս ամէն անոնք որ մեր այդ խեղճ հայրենակցաց խաներն ու սենեակները չեն այցելած , երբեք գաղափար մը չեն կրնար կազմել անոնց խեղճութեան և բնակարանի ազատ ու ծանր միջնորոտին վրայ :

Խաներու սենեակներն բնգճանրապէս փոքր լուսամուտով շատ անգամ գետնայարկի խոնաւ խուցեր են , ուր չորս հինգ պանդուխտներ իբր փռչելի կ'ընակին , այնտեղ կ'ընակին , այնտեղ կ'պառկին , այնտեղ կ'եփեն իրենց կերակուրը , և ուր տեղի կ'ունենան շատ անգամ իրենց լուացքները . ուր տիրող միջնորոտը ծանր , գարշահատ և հեղճուձիչ իսկ է շատ անգամ : Ուր բնակող մեր կարմրայտ առօջգ գաւառացի եղբայրները քիչ ժամանակէն կ'կորսնցնեն իրենց առողջութիւնն ու կ'տկարանան , եւ իբր բնական հետեւանք կ'ենթարկուին ուսականութեան : Այս կարգի պանդուխտի սենեակներու արպարներ կը գտնուին Պոլսոյ ամէն կողմերը , զոր օրինակ ի Փափաղ Բէօրլիւ , ի Գասըմ Փաշա , ի Չաթալ խան :

Օտալար անուանեալները խեղճուկ տուներ են , որոց իւրաքանչիւր սենեակին մէջ

ընտանիք մը կ'ընակի, ուր կ'գիշերեն հայր, մայր ու զաւակներ, երբեմն մինչեւ 8—10 հոգի: Սենեակին կեդրոնը գրաւած է ամառ ձմեռ կրակարանը (մանկալ), որոյ վրայ կ'պատրաստուի կերակուրը, անդ կ'փրոուին ձերմակեղէնները, ամէն ինչ այս սենեակին մէջ տեղի կ'ունենայ... Կրնաք երեւակայել այդ խուցերու մթնոլորտին վիճակը, ուր բնակողներ դեղնագոյն ու հիււանդագին երեւոյթ մը կ'առնեն բնակաւնաբար, և մեծ հարկ մը կ'վճարեն թոքային ուռականութեան, որոյ զարգացման ամէնէն նպաստաւոր հողը կ'ներկայացնեն:

— Գալով սնունդին, մեր գիւղերու և փոքր քաղաքաց բնակիչք արդէն ամէն օր խորտիկներ չէին ուտէր, սակայն ունէին ցարդ առատ հաց և հետն ու է խաւի: Անատուրի մի քանի վերջին տարիներու հունձքերու անհամեմատ նուազումը զըրկեց խեղճերն իրենց այս համեստ սնունդէն: Անցեալ տարի Անատուրի մէջ ըրած ամառնային պտոյտիս առթիւ լսեցի նախորդ տարուան անօթութեան աղէխարչ պատմութիւններ, և տեսայ զրկանաց հետեւանօք կմախքացած գիւղացիներու երամներ: Բարեբախտաբար այս տարի հունձքերն առատ ըլլալուն, խեղճերը պիտի կրնան գոնէ առատ հաց գտնել: Մննդոց պարբե-

րական սղութիւնն և ատոր հետեւանօք զրկանքները պիտի շարունակուին մինչև որ երկաթուղեաց և ճանապարհաց շնորհիւ հաղորդակցութիւնք գլխարանն և կայսրութեան ամէն կողմերը մննդոց գիները նոյնանան:

Մեծ քաղաքաց մէջ աղքատ ընտանեաց ասրուսան երթալով կ'գժուարանայ կենաց հեռզհեռէ աւելի սղելուն հետեւանօք, որով և անոնց առողջութիւնն հեռզհեռէ կ'խանգարի, և աւելի տրամագիր կ'ըլլան թոքային ուռականութեան ենթարկուելու:

Արեւելքցիքս ի բնէ դանդաղ ենք, և մեծ ու արագ աշխատութիւններ կատարելու վարժ չենք, բայց կենաց պայմաններու գժուարանալն ու սղելը, և գոյութեան պայքարի օր քան զօր սաստկանալը կ'պարտաւորեն զմեզ կրկնել մեր աշխատութիւնները:

Գործարանի կեանքն ալ նոյնը կ'պահանջէ. արդարև ի մեզ ցարդ գործարանի կեանքն անծանօթ էր, որով և ճիգով աշխատանք չկար. սակայն մի քանի տարիէ ի վեր ասդ անդ գործարանք հիմնուեցան, ուր գործաւորք ըստ իրենց արտադրութեան վճարուելուն՝ բնականաբար կ'հարկագրուին աւելի աշխատիլ ու արտադրել: Այո՛, Եւրոպացիք մեզմէ աւելի կ'աշխատին, սակայն շատ աւելի լաւ ալ կը

անանխն . իսկ ի մեզ աննդատութիւնը նոյնը մնալով աշխատանքն աւելցած է . այս համեմատութեան խանգարումը կ'նշանակէ չարքաշ կեանք՝ սր թոքային ուռականութեան ենթարկման պայմաններէ մին է :

Հարկ է առ այս օրինակ մը տալ : Սեբաստիոյ մէջ 15-20 տարիներէ ի վեր գորգաշինութեան գործարաններ հաստատուած են . ուր կ'աշխատին հինգ տարեկան մանկիկներէն մինչ 45 տարեկան կիներ . վճարումն արտադրութեանց համեմատ սեզի կ'ունենայ , որոնց հետեւանօք եռուղեռ գործունէութիւն մը կ'ախրէ հոն : Աշխատութիւնք կ'սկսին արշալոյսէն առաջ և քարիւղի լոյսով , և կ'աւեւն մինչև ցվերջալոյս և փոքր ինչ աւելի իսկ . ի մի բան օրական 12—16 ժամ աշխատութիւն սեզի կ'ունենայ , ըստ եղանակին և գրեթէ անդադար . անօթութիւն զգացող խեղճեր թէ՛ կ'աշխատին և թէ հացի չերտ մը կը կրծեն ժամանակ չկորսնցնելու համար : Եւ այդ փոշելից և բուրդի մաղմկուկներով լեցուն մթնոլորտին մէջ առօրեայ այսչափ երկար աշխատողները կիլնդունին օրական 20 փր .էն առ առաւելն երեք զրշ . , մեծ մասն օրական 1—2 զրշ . միայն : Այո՛ , Եւրոպացիները չարաչար կ'աշխատին , սակայն երբեք 10 ժամէն աւելի , և ցերեկը փոք ինչ հանգիստ կ'ընեն ու լաւ կը

կ'ճաշեն , որով և կրնան տոկալ : Բսկ մեր խեղճերը թէ՛ պէտք եղած անունդը չեն ընդունիր և թէ չափազանց կ'աշխատին , ու իբր հետեւանք , այդ գործարաններն դիմող կարմրայտ մանկիկներն ու աղջնակները քիչ ժամանակէն կ'կորսնցնեն իրենց գոյները , զալիւհար կ'ըլլան , շատեր ալ կ'սկսին հազալ , և արդէն ուռականութեան մանրէներն սկսած են բոյն դնել այդ խեղճերուն թոքերուն մէջ :

Ի մի բան , այս երեք աննպատակ պայմանները ձեռք ձեռքի տուած՝ մեծապէս կը խանգարեն մեր հէգ ժողովրդեան առողջութիւնը , և արամադիր կ'ընեն զայն թոքային ուռականութեան , որոյ մեծ հարկեր սկսած է վճարել մեր երկիրը :

Այս մասին ևս առողջապահական վարչութիւնը չկրցաւ ինձ պահանջուած թիւերն և ցուցակները տալ , ուստի և ինձ կ'պակսին հաստատուն տարրեր՝ կորստեան քանակը չափելու համար . առկէ անկէ առնուած հատակոտոր տեղեկութիւններով կ'հաշուեմ տարեկան քանի մը հարիւր հազարի՝ գուցէ կէս միլիոն անձի՝ կորուստ այս անագորոյն հիւանդութեան երեսէն , յորմէ կրնայինք զերծ ըլլալ , եթէ Առողջապահական վարչութիւնը , Մարդասիրական Ընկերութիւնք և կառավարութիւնը հոգածու գտնուէին ժողովրդեան խոնար-

հագոյն դասին շատար Բնենք ինչ որ կարելի էր ընել այդ երեք աննպաստ պայմաններուն դէմ:

— Չեմ բեր թէ Եւրոպոյ մէջ գործաւոր դասակարգը պալատներու մէջ կ'ընակի և օգասուն սալօններ կ'ունենայ իր արամադրութեան տակ. սակայն անդ առողջապահական մարմինները կ'այցելեն վատառողջ վայրերը, կ'պարտաւորեն ամանակներն առողջապահական պայմաններու տակ դնել այդ վարձու յարկերն և կամ կ'քանդեն զայնս: Իսկ մարդասիրական ընկերութիւններ աժանագին բնակարաններ կ'պատրաստեն աղքատիկ դասակարգին համար, նոյն իսկ միջոցներ կ'խորհին զանոնք տունի տէր ընելու 20—30 տարիէն. իսկ մենք բան մ'ըրած չունինք այդ խեղճերուն հանդէպ:

— Կառավարութիւնն և մարդասիրական ընկերութիւնք սղութեան տարիներուն մեծամեծ օժանդակութիւններ կ'ընեն, և առողջապահական մարմինները բանախօսութիւններով և հրատարակութիւններով կ'հասկցնեն անունդին կարեւորութիւնը՝ դիմադրելու համար շատ մը հիւանդութեանց, և գլխաւորաբար Մարդկութեան այս մեծ թշնամոյն, թոքային ուռականութեան:

— Կառավարութիւնը պէտք է օրինօք

աստաս առօրեայ աշխատութեան մեծագոյն չափն, ըստ սեռի և տարիքի: Արդարեւ, չափահաս այր մը կրնայ 12 ժամ աշխատիլ, սակայն կին մը 8-10 ժամէն աւելի աշխատելու չէ: Իսկ դեռատի աղջիկներն ու պատանիներն երբեք 6 ժամէն աւելի. իսկ տասը տարեկանէն նուազ փոքրերն երբեք ընդունելու չէ գործարանաց մէջ: Կառավարութիւններն իրենց առողջապահական քննիչներուն միջոցաւ հսկելու են գործարաններու միջավայրի և միջնորոտի առողջապահութեան մասին:

Այս ամէնն առողջ մնալու համար, սակայն վերջապէս երբ հիւանդութիւնը սկսած է՝ հարկ է դարմանել. ահա ինչ որ կ'ընեն այս անագորոյն հիւանդութեան մասին Եւրոպական կառավարութիւններն ընդհանուր առմամբ:

Ա. Թոքախտաւոր ընտանիքներէ ծնող տկարակազմ մանուկները կ'ղրկեն ծովեզերեայ հիւանդանոցները:

Բ. Հիւանդութեան ենթարկեալներու մէկ մասը կ'ղրկեն բարձանց վրայ հաստատուած բուժարանները, ուր գլխաւոր դարմանն է օդարութիւն, այսինքն բացօթեայ ապրիլ ցերեկ և գիշեր:

Գ. Հիւանդներուն մէկ մասն հիւանդանոցներու մէջ կ'դարմանուին անդ հիւր-

ընկալելով, և կամ ձրի խորհրդատուութեամբ:

Դ. Մարդասիրական Ընկերութիւններ՝ շատ անգամ նպաստաւորեալ կառավարութեան կողմէ՝ ձրի դեղ կուտան այս հիւանդներուն, գլխաւորապէս ձկան իւղ, Իւլիանի և Կոնիէի բաղկացութիւններ:

— Մենք եթէ այս ամէնը չկարենանք ընել, ընենք գոնէ մէկ մասը, զորս կ'ըստասեմ Առողջապահական վարչութենէն՝ որուն գլուխը կ'գտնուին մեր երկրին պատիւ բերող երկու մարդասէր ու գիտուն բժիշկներ:



18



3173-3176

«Ազգային գրադարան



NL0074739

«Ազգային գրադարան



NL0074738

«Ազգային գրադարան



NL0074737

«Ազգային գրադարան



NL0074736

2013

